ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի հոկտեմբերի 13-ի, ժամը 14:00-ի նիստի
N 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միկրոէկոնոմիկայի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Զարուհի Միքայելի Մելքումյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողը նշեց. Զ.Մ.Մելքումյանը 2017 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միկրոէկոնոմիկայի ամբիոնում. նախ՝ 01.09.2017 - 31.08.2021՝ ասիստենտ, իսկ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից՝ դասախոս: Վերջին 3 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Զ.Մ.Մելքումյանը 2017 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նա հրատարակել է 11 գիտական աշխատանք: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 5 է (1 ուսումնական ձեռնարկ (համահեղինակությամբ), 1 կոլեկտիվ մենագրություն («Ամբերդ» մատենաշար), 3 գիտական հոդված, այդ թվում 1-ը՝ տպագրված միջազգային գիտական ամսագրում):

Զ.Մ.Մելքումյանը դասավանդում է և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում. դասընթացները վարում է տեսական ու գործնական բարձր մակարդակով՝ հաշվի առնելով տնտեսության ժամանակակից առանձնահատկությունները: Զ.Մ.Մելքումյանը մասնակցել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից իրականացվող հետազոտություններին: Վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը:

Միկրոէկոնոմիկայի ամբիոնը միաձայն (կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) երաշխավորել են Զ.Մ.Մելքումյանին՝ մասնակցելու Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միկրոէկոնոմիկայի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Զարուհի Միքայելի Մելքումյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 57, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Քվեարկության պահին դահլիճում չէր Մ.Ս.Մելքումյանը):

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին և քվեարկությանը մասնակցել են 58-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 54, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկ՝ 3:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միկրոէկոնոմիկայի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Զարուհի Միքայելի Մելքումյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (խմբ. 17.02.2022 թ. N 177 - Ն) 2-րդ գլխի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ **Զարուհի Միքայելի Մելքումյանին** շնորհել **դոցենտի** գիտական կոչում **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»** մասնագիտությամբ:

2. Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2022 թ. հոկտեմբերի 13
Երևան